ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ

2015 թ. հոկտեմբերի 15-16-ին ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն գումարեցին «Հայոց ցեղասպանություն-100. ճանաչումից՝ հատուցում» միջազգային երկօրյա գիտաժողովը, որի ընթացքում երկու նիստ անցկացրեց «Հայոց ցեղա-սպանության արտացոլումը արվեստում» մասնաճյուղը. լսվեց 20 զեկուցում:

Գիտաժողովի շրջանակում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ (15.X) ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստա-իտության թեկնածու, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր, տաղանդավոր դաշնակահարուհի Լիլիթ Արտեմյանի մենահամերգը:

Դաշնամուրային երաժշտության երեկոյի սկզբում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը իր ներածական խոսքում նկատեց, որ համերգը բացառիկ է իր տեսակի մեջ, քանի որ դրան մասնակցում են այն երիտասարդ կատարողները, որոնք զբաղվում են գիտական աշխատանքով:

Համերգն ուներ եռամաս կառուցվածք՝ «Կոմիտաս», «Հայոց Մեծ եղեռնի արտացոլումը երաժշտության մեջ» և «Վերածնունդ»:

Համերգի առաջին համարը Տիգրան Չուխաճյանի «Մահանվագն» էր՝ հայկական դաշնամուրային առաջին Marche funèbre-ն, որի կատարումը ձոնվեց Հայոց ցեղասպա-նության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակին: Ա. Ասատրյանը համառոտ ներկայացրեց պիեսի ստեղծման պատմությունը: «1884 թվականի դեկտեմբերի 7-ին Կ. Պոլսում վախճանվում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը: 47-ամյա պատրիարքի վաղաժամ մահը ցնցում է տաճկահայերին, նրանց թվում՝ հայ դասական պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի սկզբնավորող, հայ երաժշտության դասա-կան, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր և առաջին կազմակերպիչ, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ Տիգրան Չուխաճյանին:

Ուժերի ծաղկման շրջանում գտնվող գործչի մահը մեծ հարված էր՝ մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսի մահից (6.XII.1882) հետո նա ընտրվել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Պատրիարքի վաղաժամ մահվան ազդեցության տակ Տ. Չուխաճյանը գրում է «Արտօսր ի Շիրիմ Տ. Տ. Մեծին Ներսէսի երիցս երանեալ Հայրապետին եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքին Մահանուագը»՝ հայկական դաշնամուրային երաժշտության մեջ անդրանիկ Marche funèbre-ն: Պիեսը, որի ձեռագիրը գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող՝ Տիգրան Չուխաճյանի դիվանում, նույն թվականին էլ տպագրվել է»:

Լիլիթ Արտեմյանը Տ. Չուխաճյանի «Մահանվագի» առաջին համերգային կատարողն է Հայաստանում: Ի դեպ, նա առաջին անգամ պիեսը նվագել է ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցած՝ «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգի ժամանակ (12.XII.2012), Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ՝ Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին նվիրված նստաշրջանի ընթացքում:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցող համերգի հաջորդ երեք համարները ներկայացրեցին կոմիտասյան շարքը: Լիլիթ Արտեմյանի կատարմամբ հնչեցին Կոմիտասի դաշնամուրային «Վեց պարերը» և «Գարուն ա» ժողովրդական երգի՝ Ռոբերտ Անդրեասյանի տրանսկրիպցիան: Լիլիթը կոմիտասյան շարքը եզրափակեց Հարություն Դելլալյանի «Նվիրում Կոմիտասին» երաժշտական դիպտիխով:

Համերգի միջնամասում պրեմիերաներ էին: Դրանք այն գործերն էին, որոնք գրվել էին Մեծ եղեռնի անմիջական ազդեցության տակ: XX դ. հայ ծովանկարիչ Վարդան Մախոխյանի (1869-1937) "La Plainte de l'Armenie" («Հայաստանի ողբը») երաժշտական պիեսը դաշնամուրի և ջութակի համար կատարեցին Լիլիթ Արտեմյանը և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանող Գրիգոր Գյուլխանջյանը (դասախոս՝ արվեստագիտության թեկնածու Մարտուն Կոստանդյան): Ի դեպ, սույն գիտաժողովում Լ. Արտեմյանի զեկուցումը նվիրված էր Վ. Մախոխյանի "La Plainte de l'Armenie" ստեղծագործությանը:

Հաջորդ համարը դեռևս 1915-ին Ռուսաստանում տպագրված՝ Լ. Սիմոնյանցի «ըպՋպվպՓ» պիեսն էր, որի նոտաները Լ. Արտեմյանին տրամադրել էր Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտխորհրդի անդամ Արամ Սաթյանը:

Պրեմիերաների շարքում հնչեցին ստեղծագործություններ, որոնք գրվել էին եղեռնից ճիշտ 100 տարի անց: Հատկապես այս համերգի համար էր ստեղծվել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Միխայիլ Կոկժանի «Колокол не умолкнет никогда» ստեղծագործությունը, որը

նույնպես կատարեց Լ. Արտեմյանը: Այնուհետև հնչեց Արվեստի ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, տաղանդավոր կոմպոզիտոր, երգեհոնահար և դաշնակահար Հովհաննես Մանուկյանի «Տեր մեր Հիսուս Քրիստոս. նա գալիս է» դաշնամուրային պիեսը՝ հեղինակի կատարմամբ: Այս ծրագրային ստեղծագործության մեջ նա Հայաստանը դիտարկում է որպես մարդկային քաղաքակրթության բնօրրան, սուրբ երկիր, որտեղից էլ պիտի սկսվի հոգևոր զարթոնքը:

Ա. Ասատրյանը համառոտակի ներկայացրեց սփյուռքահայ կոմպոզիտոր, դաշնակահար և մանկավարժ, պրոֆեսոր Արուսյակ Այնթապլյանի ստեղծագործությունը, որը դեռևս անծանոթ է հայ ունկնդրին:

«Պատահական չէ, - նկատեց Ա. Ասատրյանը, - որ Այնթապլյանի ստեղծագործության հայաստանյան պրեմիերան տեղի է ունենում հենց Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում: Այնթապլյանը նույնպես ծնվել է Թուրքիայում՝ Մերսինում: Ապրելով ու ստեղծագործելով Լի-բանանում՝ նա սերտորեն կապված էր Ֆրանսիայի հետ՝ ինչպես Կոմիտասը: Եվ ինչպես Կոմիտասն է հավաքել ու գրառել հարևան ժողովուրդների՝ քրդերի ու թուրքերի ժողովրդական երաժշտության նմուշները, այնպես էլ Այնթապլյանը մշակել է արաբական դաբկեները՝ դրանով իր երախտագիտությունը հայտնելով արաբ ժողովրդին»:

Այնուհետև Ա. Ասատրյանը Հայաստանում առաջին անգամ նվագեց Ա. Այնթապլյանի «Chatti ya dinyi» դաբկեն, որը, հայտնաբերելով Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի՝ Ա. Այնթապլյանի արխիվում, տպագրել է կոմպոզիտորին նվիրված իր մենագրության հավելվածում: Նշենք, որ ձայնանիշերի համակարգչային շարվածքն իրականացրել է արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանը: Ա. Այնթապլյանի «Chatti ya dinyi»-ի կատարումը ձոնվեց այն բոլոր պետություններին ու ժողովուրդներին, որոնք հայ ժողովրդի ծանր, օրհասական օրերին նրա կողքին էին:

Համերգի երրորդ՝ եզրափակիչ մասը խորհրդանշում էր հայ ժողովրդի վերածնունդը: Լ. Արտեմյանը կատարեց Առնո Բաբաջանյանի «Պոեմը»՝ գրված 1965 թ., իսկ ավարտին՝ Արամ Խաչատրյանի «Տոկկատը» և Տիգրան Չուխաճյանի «Մեծ ֆանտաստիկ վալսը»:

Դաշնակահարուհու ծրագրի յուրաքանչյուր համար համոզիչ մեկնաբանություն ուներ և ջերմ ընդունելություն գտավ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.
Արվեստագիտության թեկնածու